



Ս. Փրկիկը վանքի շինութեան առաջին հիմունքը փորձած աստեղն ստեղծելի միջոցն ներքեկէն երեան եկաւ «մուգայիք» յատակի մը մի մաս սքանչելի գեղեցկակերտութեամբ, ունենալով զանազան ծաղկանց, նկարուց զարդուց եւ պատկերաց չքնաղ ճոխութիւն մը կատարելապէս նոր եւ փայլուն վիճակի մէջ, հակառակ իւր բազմադարեայ հնութեանն որ թէպէտ թուական եւ արձանագրութիւն չէկրիր, բայց բոլոր ձեռնհաս գնահատողներէն կը վճռուի լինել յառաջ բան զարարական թուական եւ Դ. կամ Ն. դարու գործ: Ս. Փրկիկը վանքին մէջ երեան եկած այն չքնաղակերտ «մուգայիք»ը շատ նմանութիւն ունի Համբարձում լեւոյն վրայ 1968 ին Ռուսաց պեղումներով երեան եկած «մուգայիք»ին, սա տարբերութեամբ որ դարձանագրութիւն եւ ամսօրնայլ ոչ տարեթիւ ունի, մինչ միւսը չունի եւ ոչ ինչ, զի կ'երեկ ի՞նչ ատենը աւերիտ մասանց մէջ են եղեր: Համբարձում լեւոյն վրայ գտնուած «մուգայիք»ը հայերէն արձանագրութիւնն ինչպէս որ անհակառակի լի փաստ է թէ չայց գործ է այն, նոյնպէս Ս. Փրկիկը վանքին մէջ գտնուած ինչ անոր յար նմանութիւնն զնոյն կը հաստատուէ անպիճեմ կերպով:



ՍՈՒՐՅԱՆԴԱԿ

Կը հրատարակուի առ այժմ ամէն
շաբաթ օրեր իւր յատուկ տպարանէն,
Թիւ 827 ու 828 Փայտսէտ ավ.
Վէսթ Հոպոքըն, Ն. Ճ.

PUBLICATION OFFICES.
No. 827-828 Palisade Ave.
West Hoboken, N. J.

— ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ —

Մ. Նախնազաց ու Բանաստայի համար
Տարեկան մէկ տոլար

Ուրիշ երկիրներու համար՝

մէկ ու կէս տոլար

Թղթատարութեան ծախքը խմբա-
գրութեան վրայէ. Բաժանորդագիրն է
կանխիկ վճարելի. Ծանուցումներ կրն-
դունուին գովազուցիչ պայմաններով.

NOTICE TO ADVERTISERS

There are actually about ten thousand
Armenians in the United States, and their
number is fast increasing by fresh arrivals.

These Armenians have, like other folks,
their own needs and requirements to be
supplied, and, as they are generally ignorant
of the English language, a newspaper is
published in West Hoboken, N. J. in
their own vernacular for their especial
benefit and convenience.

An edition of 1,000 copies is issued
weekly for the present, with the expecta-
tion of doubling that number shortly, since
its circulation will embrace all parts of the
world wherever Armenians are found.

The Armenians being an industrious
and very thrifty people, are fond of home
comforts and civilized luxuries, the adver-
tising public will do well to take notice of
these facts and secure their trade and pat-
ronage by advertising in the "SOUR-
HANTAG" (Express) at the following very
moderate

RATES

A space of 1 inch at \$1.25 per insertion.
The same over THREE insertions, at
\$1.00 per ins.
For more space, at the same rates and
for a continued insertions, satisfactory dis-
count will be allowed.

N. B. All Advertisements requiring
translation will be made free of charge.

Նամակ կամ ճրար ղրկել հարկ
է հետեւեալ հասցէին.

To The Editor of THE SOURHANTAG,
West Hoboken, N. J.
U. S. America.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆՈՒԹԻՒՆՔ

Վուսթրիի և Փրօվիտէնի Հայ
գաղթականութեան մէջ լրագրոյս
խմբագիրն այնչափ վառ ու մշակ-
եալ գտած է սրբային զգացում-
ներն ու եռանդն, որչափ չէր կար-
ծէր երբեք, ու այնչափ լաւ գտած
է Հայոց սպարաւոր, կենցաղավար-
թեան ու լեւալութեան կերպերն,
որչափ չէր յուսար երբեք. Մի-
թարական է այս անշուշտ ամէն
Հայի համար.

Քանի մը շարքով է վերջ զինուո-
րական կրթութիւն ուսանող Նիւ
Եորքի և չըջակայից Հայերն ու կը-
կըմն զէնքի կրթութեան. Արդեօք
զէքը թշնամիին առջև գործածե-
լու վարժութիւնն երբ պիտի ըս-
կան տանք.

Պէտք չէ բնաւ կարծել թէ զին-
ուորական կրթութիւն ուսանող ա-
մէն Հայ սպարաւորն է զինուորագ-
րել ու մեռնելու երթալ, թէ և փա-
վաքելի որ ոչ միայն կրթութիւն

ուսանողներն, այլ ամէն Հայ մարդ
պատրաստ լինի սուրբ դրծն առաջ
մղելու մեծ նպատակի համար.

ՄՈՒՍԱ ՊԵՅԸ

Կ. Պօլսէ քաղաքի մէջ 19 թիւ
Հեռագրի մը կը ծանուցանէ թէ
Մուսա բանտարկուած է վերջապէս,
ու նախնական հարցաքննութեան
մ'ալ ենթարկուած է. Յիշեալ հե-
ռագրի ըսածին նայելով ամայս
23 ինքստի պիտի ենթարկուի աշ-
խարհածանօթ ոճրագործին և եթէ
յանցաւոր գտնուի. անատեն իւր
դատաւարութիւնն հրապարակ
պիտի գայ.

Մենք չենք կարծեր թէ թուրք
կառավարութիւնն յանցաւոր պի-
տի հրատարակէ զՄուսա, քանի որ
նա գաղտնիքներ ու կարեւոր գրու-
թիւններ ունի իր քով պահուած,
այլ մէկ կողմէն Եւրոպացիի միտքն
հանդարտեցնելու և միւս կողմէն
ինչորսն անուշ տեղը կապելու հա-
մար, ձեռքի տակէ սպաննել պիտի
տայ հանրածանօթ ցեղապետն. յայ
տարարելով թէ անձնասպան ե-
ղած է նա, ինչպէս որ ըրած է նոյն
օրինակ գործեր այլ եւայլ ժամանակ.

Ինչո՞ւ տաճիկ, որ հակառակ
իր կամաց ու խոստմանց պիտի ըս-
տիպուի դուցէ վորջանք մը բերել
այդ առաքինի զապի գլխուն որ
այդչափ հաւատարմութեամբ գոր-
ծեց երկար առեւէ իմեր. Բայց ինչ
օգուտ, ուրիշ կերպով դժուար է
արդարանալ, թէ և Մուսա մը սատ-
կեցնելով արդարութիւնն տեղը չի
կրնար գալ երբեք.

ՍԱՍՈՒՆ ԳՅԱՆՈՒՄԿԻ

Պօլսոյ «Սապա» թուրք լրա-
գրին մէջ կը կարդանք հետեւեալ
կտորն.

«Պիթիւի գաւառական լրագիրը
այլ և այլ տեղեկութիւններ կուտայ
Մասուն գաւառակին վրայ, որ Մու-
շէն 14-15 ժամ հեռաւորութեամբ
կը գտնուի. Գաւառական լրագիրն
կը յարէ թէ այդ գաւառակ ցարդ
վայրենական վիճակի մը մէջ գըտ-
նուելով, մարդահամար կատարուած
չէ, սակայն ենթադրական հաշուով
6000 է աւելի բնակիչ ունի, որուն մէկ
հինգերորդը հայ և մնացեալը քուրտ է.
Լեզուն, որ արարեալէն մօտ անկանոն
լեզու մ'է, հայերէն, քուրտերէն և
զապադերէն լեզուաց խառնուրդ մ'է.
Հայերն ու քուրդերը վայրենութեամբ
անանական բարոյց մէջ կը գտնուին
և շարագործութեամբ կը զբաղին. Այս
գաւառակը ի վաղուց հետէ զինուորա-
կան իշխանութեամբ կը կառավարուին
և կառավարական պաշտօնները յաճախ
գժուարութեանց կը հանդիպին տեղ-
ւոյն բացառիկ կացութեան պատճա-
ռաւ.

«Պիթիւի թերթն ի վերջոյ կը պատ-
թէ իրեն արդեւնք այս վարենական
վիճակին, անցեալներն մէկ քանի աւա-
զակներ գիշերանց մարդ մը կը սպաննեն
իւր տան մէջ. Այս պատճառաւ երկու
գումարակ զօրք կը դրկուի անդ
մարդասպանները ձերբակալու և
հանրային սպառնալիքները վերահաս-
տանելու համար, սակայն այս տնօր-
նութիւններ ի գործ գրուելու ար-
հուն երկու գումարակներու ան-
բաւականութիւնն հասկցուելով եր-
կու վաշտ զօրք և երկու լեւալ թըն.
զանօթներն ևս կը դրկուին. Մէկ քա-
նի օր յետոյ պաշտօնավար տեղեկու-
թիւն կառնուի թէ այդ մարդաս-
պանք ինչպէս նաեւ իրենց չորս ըն-
կերք ձերբակալուած են կարգանի Նոր-
չէն գիւղին մէջ, ուր սպաստանած
էին.

«Գաւառական լրագիրն այստեղ իւր
վեհ՝ Սուլթանի կենաց համար բարե-
մաղթութիւններ կ'ընէ և շնորհա-
լութիւն կը յայտնէ անկողան կառա-
վարութեան կողմէ կը ջանքերուն
համար».

* *

«Սուլթանութեան մէջ ճշմարտու-
թիւն մը կայ» կըսեն ոմանք. Եթէ այս
կերպ խորհելով նկատու անենք միշ-
եալ կտորն, կրնանք միայն սա երա-
կացութեան դալ թէ «Սապա»-ի կամ
Պիթիւի թերթին գրածներուն մէջ
մէկ ճշմարտութիւն մը կայ միայն և
այդ է. ստատիստիկութիւն և հարստա-
հարութիւն թուրք կառավարութեան
ու թուրք մամուլի կողմանէ.

ՈՒՂՂՈՒԹԻՒՆ ՎՐԱՊԱՅ ԿԱՐԾԻՔԻ ՄԸ

«Խնամակալ Յանձնարարութիւն» որ
երեք ամիս ի վեր ի Լոնտոն կազմուե-
ցաւ մեր խնդրանաց վրայ, «Հայաս-
տան»-ի դատը գործունեաց կերպիւ
պաշտպանելու նպատակաւ թէ՛ մամ-
լը և թէ Անգլիոյ Խորհրդանոցին մէջ,
ամենեւին վերաբերութիւն չունի «Հայ-
ական դատարարականութեան ստատու-
ղիկերակցութեան» հետ, որ 1881 ին
հիմնուած էր, և ի վաղուց հետէ լուծ-
ուած է, և որոյ նպատակն էր միայն
Հայաստանի մէջ ուսումն ծաւալել.
Մեր արդի խնամակալ յանձնարարին
անդամներն և ոչ մին, բաց ի Պ. Պրայ-
սէ, այդ հին ընկերութեան մասնակ-
ցած է, և որոյ անդամներն ալ ոմանք
արդէն վախճանած են. «Հայաստան»-ի
Խնամակալ Յանձնարարութեան մեր գի-
մեցմանց վրայ կազմուեցաւ, և երեք
ամիս ի վեր սկսած է զերբ գոյութիւնն
ունենալ. թիկունք լինելու մեր ճա-
կատարարին. Վերջիս կատարուած
Խորհրդանոցական վիճառքը թէ ի Սե-
նեկին Լորտից և թէ ի Սենեկին Երեւ-
նիւնաց, նոր կապուած Մասունին
հրատարակութիւնն, և ի նմա իւրա-
կեալ ըստ վերջին վիճառքի հիւ-
պատարարութեան և այլք, որք հաստա-
տեցին «Հայաստան»-ի խօսքերը, շատ
խալ յայտնի սպասուցք են թէ «Որչափ
զօրք և մեծ սպարդ արդիւնք ստացանք
և պիտի ստանանք ի մտայ անդգլիա-
կան ազատականաց ձեռնարկութեանն.
Սակայն կը մնայ որ նաեւ ազգն իւր
կողմանէ զիւր օգնութիւնն և զիւր թի-
կունքն լուրջ կերպիւ շարունակելու
չզանայ. Չայս կըստիպուիմք իրեն
պարտք ճանչցնել մեր Հայրենակցաց,
ոչ զմեր անձն խնդրելով, այլ մեր երկ-
րին հասարակաց շահն.
(Հայաստան)

ՎՈՒՍԹՐԻՆ ԼՈՒՐԵՐ

Գրիգոր Մուրատեան անուն երի-
տասարդն որ Վուսթրիի մէջ քանիցս
սպորէն գործերու ձեռնարկելով վեր-
ջապէս քաղաքէն խոյս տուած և Նիւ
Եորք նահանգի այլ և այլ կողմերն գո-
լութեան յանգանք մէկ տարի բանա-
արդեւութեան դատաւարանուած էր,
ժամանակը լրացուցած և վերադա-
վելով զարմած է շարքէ մը ի վեր
ուր ազատ կը շրջի, թերեւ նոր ձեռ-
նարկներու յատակադիմ պատրաստե-
լով. Յուսուի է թէ Վուսթրիի Հայք
ներդրամութիւնն այն աստիճան չի
պիտի չուային անարժան երիտասարդի
մը որն ինչպէս յայտնի է քանի քանի
անգամ շարաշար գործածած է իրենց
վատահալութիւնը.

Յակոբ Տէր Մանուէլեան երիտա-
սարդի խեղճուկ կրպակն այս անգամ
ևս՝ հինգերորդ անգամ գոլով գրաւի
ներքեւ գրուած և «Էլիքի» մը նստած
է հան, եղած հատոյթն պարտաւարաց
կողմանէ հաւաքելու պաշտօնով. Ցա-
ւալի բան.

Գալ թերթով կը հրատարակենք
մի երկրորդ նամակ «Սուլթանի Սե-
նեկին» որ խոստ կարեւոր լուրեր կը
պարունակէ.

Ի ՉԻՆԱՍՏԱՆ

ՀԱՅՈՒ ՄԸ ԱՆՈՐԻՆԱԿ ՅԱՅՐԱՊԱՅԻՆՆԵՐ
ԾԱՅՐԱՊԱՅՆ ԱՐԵՒԵԼԻՑ ՄԷՋ

ԵՐԿՐԻՍԱՄԵՆԷ ՀԱՐՈՒՍՏ ՀԱՅԱՐԱՊԱՅԻՆ

Շարունակութիւն եւ վերջ

«Պ. Չաթիւր այս ծրագիրն յղա-
ցաւ, և ի վեր առաւ խորհրդակ-
ցութեամբ Կառավարին և մասնա-
տեսարց հետ, և անցեալ տարի երբ
ի Լոնտոն էր գտնուէր, գաղթային
նախարար Լորտ Նոթմօրտի հետ
տեսակցութիւն մ'ունենալով, նո-
րա վերջնական հաւանութիւնն ըս-
տացու.

«Հանկ—Բոնկի շինողը» կորովի
մարդ մ'է իւր 45 ամեայ, կրնաս
մը աննկարագրելի այլ գիւրաւ ճա-
նաչելի գոհ և զուարթ գեղեցիկ.
Իւր բարեկամական սիրով իւր վար-
մունք շուտով ձեռ սիրար կը գրա-
ւեն և հինգ վայրկեան խօսակցու-
թեամբ կիմանար թէ ձեռ գեղմ ու-
նիք շատ պոյժաւ և քաջ ուղ իմա-
ցականութիւն մը գրամական և
սեղանաւորական ամէն գործառ-
նութեանց վրայ, օժտեալ այնպիսի
խորթութեամբ հեռատեսութեամբ
որ մարդարեւ տեան ձիւք մը կը նը-
մանի. Պ. Չաթիւր բաւական է որ
կտոր մը գեղանի վրայ նայի, և ետ-
րային քառորդ մէծ խիտի տար-
բերութեամբ կրնայ գուշակել թէ
հինգ տարի ետքն այդ գեղանի ինչ
զիտի արժէ. Եթէ գեղանի մը ար-
ժէքն յանկարծ քարծրանայ, (ինչ-
պէս Բովլունի հողը պիտի լինի ի
մտայ շինական երկաթուղոյն եր-
կարածգամը), գիտցէր որ Պ. Չա-
թիւր տարիներ առաջ արդէն գնած
է այդ գեղանի. «Ինչ բախում որ
մարդ», այս բացաղալութիւնն ահա
կը լսենք ամէն օր ի Հանկ—Բոնկ.
Բայց սա այն տեսակ բախումն է
որով զօրապէս ճակատամարտ մը
կը շահի, կամ նաւապետն ուղիւ-
նաներէն անդին իւր նաւահան-
գիտար կը գտնէ. Բայց և այնպէս
Հանկ—Բոնկի մէջ, և մանաւանդ Չի-
նացոց մէջ, «Չաթիւրի բախումն»
տեսակ մը պաշտօն կը տարուի. Ինչ
տեսակ արժեք լուրջ զոր Պ. Չաթիւր
գնէ, իրենք ալ կը գնեն. Ինչ ձեռ-
նարկութիւն որ քնէ Պ. Չաթիւր, ի-
րենց գրամն ամենայն վատահա-
լութեամբ կը յանձնեն. և երբ գլուխն
երեքցնէ ուրիշ ձեռնարկութեան մը
վրայ՝ չեն մտենար անոր. Անցեալ-
ներն երկու շաբթի չափ բացակայ
մնաց Գաղթականութեան, և այն
միջոցին եկաւ այն հաշտակաւոր մը-
րիկն որ հիմին վեր տապալեց կղերն,
միլիոնաւոր տոլարի վաւա պատճա-
ռելով. Մի քանի օր ետք անոց
շնորհքով շինացի ձերտնի վաճա-
ռական մը, որ քառորդ դարէ հետ-
տա հաստատուած և հարստացած
է. Փոթորիկին գործած աւեր-
մունքը զիտելով, գլուխն երեքուց
տրամադին և անհուն վշտակրու-
թեամբ մը ըսաւ Չինացին. «Պ. Չա-
թիւր գնաց, և տ'աւք ինչեք կը
պատահին». Բախդ արդարեւ ունի
այս մարդ. զի գեղ անցեալ օր տե-
սայ որ ձիարշաւին մէջ առաջին և
երկրորդ միջանակները շահող ձի-
երն իւր ձիերն էին. Բայց կարծեմ
Պ. Չաթիւր կը խորհի այն բանա-
տեղին պէս որ աւելի քաջատարու-
թեան կը հաւատայ քան բախդի.

«Եւ քիչերուն բախդը Պ. Չաթիւր-
ի բախդին չափ քաջատարութեան
արդեւքն է. Նա մշտապատրաստ է

իւր բոլոր հոգեով ու մարմնով ունէ՛
ձեռնարկութեան մէջ նետուելու ,
բաւական է որ իւր խելքը կտրէ թէ
առողջ դորձ է : Օրինակի համար ,
անցնել տարի ԱճԵՅ անուն հազար
տակաւաւորացի նոր շողենաւու
մի նաւապետն Հոնկ—Բոնկէ Սինկա-
փու գացած ժամանակ ճամբէն չե-
ղեցաւ 200 միոն , և գիշերային լիա-
շողի գնաց խրեցաւ աւազուտ տեղ
մը Աննամի ծովեզերաց մետ : Հոն
կը մնայ շողենաւն , և Լոյտի գոյ-
ծակալն աճուրդով վտճառեց զայն :
Բնակոնապէս Պ . Չաթըր գնեց ,
զի այնպիսի շողենաւ մը լուսնին
մէջ իսկ տեսնէր պիտի գնէր , և
ապա հարցոյց նաւայորդար ըն-
կերութեան թէ յանձն կ'առնու
աւազէն հանել շողենաւն և նորէն
իրիւ աւազնակարգ (1) գասակար-
գել Լոյտի նաւացոյց ցակին մէջ : Ըն-
կերութիւնը մտածեց , շատ մտա-
ծեց , զի վտանգաւոր ձեռնարկ մը
կը թուէր : Ի վերջոյ պատասխանեց .
—Այո՛ , 60,000 տոլարի վտխա-
րէն :

—Շատ է , աւազից Պ . Չաթըր :
—Լաւ , 55,000 տոլար տուէք :
—50,000 տոլար ունիմ , կը հա-
նէք շողենաւը :
—Ո՛ր :

—Օլոյթը , ես պիտի հանեմ ,
կըտանէ՛ք :

Պ . Չաթըր զոյգ մը ճարտարա-
գետներ վարձեց , գնեց գործիք-
ներ և շատ մը աւազի պարկեր , և
նոս մը վարձեց զանոնք Աննամ վըր-
կերու համար : Ես ինքս տեսայ Ար-
ճԵՅ այդ հեռաւոր ծովեզրին վը-
րայ , և տարակոյս չունիմ որ անվը-
նաս դուրս պիտի հանուի : Յայն-
ժամ Պ . Չաթըր 50,000 տոլարը պի-
տի շահի , իւր քաջասրտութեամբ
կամ իւր բախումով , ինչպէս որ կ'ու-
զէք :

Արեւելք

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Նիւփոթի — Հաճեցէք ձեր ա-
նուն իմացնել մեզ , որպէս զի կարո-
ղանա՞ք պատասխանել ձեր նամակին :
Նիւ Ենթ — Մ . Սուրճանդակի Ուրմ-
բազին պատասխանատու չէ նրա տա-
րակեալ թղթակցութեանը :
Ֆրէզն — Տ . Ն . Ձեր զրկանքն
գտնեցինք : Հայաստան կըստանաք քիչ
ատենէ :

ՊԱՏՈՒԱՆՇԱՆԻ ԱՌԵՒՏՈՒՐԸ

Թուրքիոյ մէջ ոչ մի գործ կամ առ-
կուր կայ այսօր այնչափ չափաւոր , որ-
չափ է պատուանշանի վաճառականու-
թիւնն որ մենաշնորհ մ'է գործեր բրո-
նաւորի մը՝ մեր ամենասիրելի Սուլ-
թանին ձեռաց մէջ : Սա վերջինս մեծ
գործ կրնէ այժմ Հայոց հետ . գեռ քա-
նի մը շարքիներ առաջ տանի շտի
հայերու տրուեցաւ այդ թանկագին
իրերէն : Այս անձանց կարգին մէջ կը
գտնուին Պալեան Սիմոն պէյ , Գրիգոր-
եան Յովսէփ , վարժապետեան Յակոբ ,
Պալեոգեան Սարգիս և այլ չի՛նարիներ :
Այս շքանշանի գործարանատնին
Ամերիկեան ներկայացուցիչն մեծ ծա-
ռայութիւն մը պիտի բրած լինի իր տի-
րոջ , եթէ նոյն նշաններէն բերել տայ
քանի մը հատ ու բաժնէ զանոնք կարգ
մը աշխատակներու որք այդ տեսչով
կը տալորին տիւ գիշեր :

ԱԶԴ

Հայերէն ամէն տեսակ կնիքներ և
«բրդեր» բաժնէ միւսերու ունենալ վտա-
նային կը հրաւիրուին գիմնէ 2 . Է-
կինեանի որ իր գնեցողն պիտի գոհաց-
իր յաւաքողները :

ՎԵՐՋԻՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ Ի ՐՈՒ-
ՄԷԼԻ ԵՒ ՍԵՐՊՈ — ՊՈՒԼԿԱՐԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱԶՄԸ

(Քարոզ զոր խօսեցաւ Տ . Գասպարեան
Հայկական Միութեան նիստին մէջ)

Ինչպէս ծանուցուած է ձեզ , երե-
կոցեանս նիւթն է «վերջին յեղափոխ-
ութիւնն իրումէլի և Սերպո—Պուլկա-
րական պատերազմն» : Սոյն նկարա-
գրութիւնն պատմութիւններէ կամ
լրագիրներէ առնուած չէ , այլ՝ առանց
արուեստական վայլի մը ճշմարիտ
ներկայացումն է այն դիպումներու
և արկածներու , որոց ականատես ե-
ղայ , և զայնս ականջներովս լսեցի ու
ձեռքերովս շոգափեցի : Մի քանի կէ-
տերու մէջ ալ անձնականիս վրայ պիտի
խօսիմ ձեզ , ոչ թէ փառասիրական մի
չարժանութիւն է այս , այլ որովհետեւ
գործաւ ճշմարտութիւններ են , և
խորհեցայ որ զանոնք մեջ բերելով՝
ձեզի տուած նկարագրութիւնս առա-
ւելաւ արտօթելի պիտի ըլլայ , տեսնելով
որ ձեր առջև ներկայացողն ևս գէթ
մի փոքրիկ մաս ունեցած է այդ նշա-
նաւոր դեպքին մէջ :

Յայտնի է ամենուրեք Պուլկարիոյ
նախկին , այսինքն՝ տասը տասն և մէկ
տարի առաջ ունեցած անտանելի ու
թշուառ վիճակն Թուրքիոյ կործանիչ
և յետապնդող կառավարութեան տակ ,
այնպիսի սարկաւոր վիճակ մը որ կըր-
նամ ըսել չարութեամբ արկի գէշ քան
այն վիճակ որոյ տակ այժմ մեր սիրելի
Հայաստանն կը տառապի , քանզի այն-
պէս կը հաւատամ որ , ո'ւէ ալդ կամ
անշատ մինչև մի աստիճան կրնայ հան-
դուրժել բարբարոսական ճնշման և
դերտական վիճակի մը տակ , և երբ
այդ որոշ աստիճանն կանցնի , այն ալ-
զն կամ անհատն կ'որոշէ կամ ապրիլ
աղատ , կամ մեռնիլ աղատ : Այդ ճըն
չունի Պուլկարիոյ վրայ որոշեալ աս-
տիճանը անցած էր : Մուսա պէյի նը-
ման բազում հրէշներ սանձարձակ թող
արուած էին , որոնք զիւրեքն և առա-
ններն աւերակի կոյտերու կը դարձ-
նէին : Գիւղացին ոչ իւր ժամանակին
տէրն էր , ոչ իւր տան , ոչ իւր կնիւն
և ոչ իւր պատւոյն : Նման միջոցաւոր
մէջ եղած շողենաւն որ բնութեան
օրինաց փոփոխմանց ու ճնշման տակ
կը խտանան , կը խտանան և վերջապէս
կը պայթին : Պուլկարիա ևս ալ չի
կրցաւ դիմանալ , և ինչպէս յայտնի է ,
խզեց իւր գերութեան շղթայներ իւր
բոլոր ճիղն թափելով :

Ձեմ ուզեր այժմ ընդարձակօրէն
պատմել իրենց հանած յեղափոխու-
թիւնն որ տեղի ունեցաւ օգոստիսեան
Ռուսիոյ , 1877—1879 ին , նմանապէս
այդ թուականէն առաջ Պուլկարի ա-
պստամբականաց քանքերն ու նուիրա-
գործութիւններն , բոսականաւորով մի
այն յիշել այն իրողութիւնն որ ան-
համար անձեր պատերազմի դաշտին
վրայ Բազանլիքի , Հսկի ու Ենի Չաղ-
րայի մօտերն և այլուր , Ազգային սե-
ղանին վրայ զոհուելով , վերջապէս
ձեռք բերին այն ցանկալի ազատու-
թիւնն : Այո՛ , գտան այն բաղձալի ա-
զատութիւնն այն օրէն , երբ զոհեցին ան
մեղ արիւն . և ՄԻՍՅԱՆ ԱՅՆ ԱՏԵՆ . . .

Գուցէ ոմանք հարցունեն թէ «է՛յ
ինչ եղաւ , Պուլկարիոյ լաւ վիճակ մը
ունեցան ազատութիւն . ձեռք բերե-
լով» : Պատասխանն է հաստատական .
Այո՛ , ամէն տեսակետով : Եթէ տար-
ուան մէջ ըրած բազմադիմ յառաջա-
դիմութիւնն արդարեւ անկարող եմ
բացատրել , երբ Թուրքիոյ բռնաբարիչ
իշխանութեան տակ կը տառապէին
ստանք , Հայաստանի նման իրենց եր-
կիրն աւերակների կոյտ մը դարձած
էր : ո'չ գործ , ո'չ ստակ կար , ո'չ տուն
ո'չ ստացումք և ո'չ արտիւ : Չի բու-
նարարուած օրիորդ մնացած չէր : Ըս-
պանութիւններ գողութիւններ ըս-
տէպ տեղի կ'ունենային փողոցներու
անկիւններն : Կախողան ելլողներու

թիւն՝ քաղաքական ոչինչ կամ անըս-
տոյք պատճառներու համար անհա-
ւատալի եղած էր : Իրենց հայրենիքէ
ելլելով օտար երկիրներ գաղթող բը-
նիկներու թիւն քանի կ'երթար կը
ստուարանար , որոնք ընդհանրապէս
Պոյնիկ կը կոչուէին ու չոր հաց մը ճա-
րելու համար փողոցներու մէջ խաղա-
լով , երգելով և ամէն տեսակ ստորին
գործեր ընելով՝ հաղիւ կրնային եր-
կարել իրենց թշուառ կեանքը :

Այն ատեն Պուլկարիոյ մէջ ոչ դպ-
րոց ըստելու արժանի դպրոց կար և
ոչ ալ ո'ւէ ազգային հաստատութիւն ,
նմանապէս գիւղէ գիւղ և քաղաքէ
քաղաք ճամփորդելու համար ոչ անձի
ապահովութիւն և ոչ ալ ուղի ըստե-
լու արժանի ճանապարհ մը կար : Տըն-
տեսական տեսակետով , Թուրքիոյ կա-
ռավարութիւնն եթէ ոչ ինչ , գէթ շատ
քիչ հասցոյթ մը կըստանար անկէ , չէ
թէ երկիրն անբարեբեր ըլլալուն , այլ
Թուրք պաշտօնէից գող ու աւազակ
ըլլալուն համար : Սակայն յիշուի
հիշանալի էին այն բարեփոխումներ զո-
րու տեսայ 1883ին երբ հոն կը գտնու-
էի , ու վերոյիշեալ պակասութիւ-
ններն զրեթէ անյայտ եղած էին :
Եթէ տարուան կարճ միջոցին մէջ ի
Պուլկարիա կը տրէր անձի և ստաց-
ուածքի ապահովութիւն , տան և պատ-
ւոյ անդորրութիւն , քաղաքէ քաղաք
չինուած մեծածախ պողոտայներն նա-
խանձելի դիւր մը առած էին . չին-
ուած էին նաև բազմաթիւ նոր և հաս-
տատուն կամուրջներ գետերու և հո-
սանքներու վրայ : Կային ամէն քա-
ղաքներու և աւաններու մէջ ազգային
խնամակալութեամբ և ծախքով հաս-
տատուած դպրոցներ , ձեմարաններ և
այլ և այլ հաստատութիւններ , որոնք
նշան են յառաջադիմութեան և բարի
քաղաքացիութեան : Մինչդեռ Թուր-
քիոյ պէս կայսերական կառավարու-
թիւն մը մինչև այս պահուս չի կրնար
թղթատարութեան միայն իրաւունքը
ստանձնել և կ' . Պոլսոյ մէջ գրեթէ
ամէն ազգաց թղթատարական գրա-
սենեակներ ի զոյ են հիմայ : Փոքրիկ
Պուլկարիա անգամ ունի թղթատարա-
կան իւր տիպար հաստատութիւնն ,
բայց ամենէն նախանձելին այն է որ
Պուլկարիա ինքնիշխան ըլլալէն յետոյ ,
բոլոր իւր թափառեալ զաւակներն վե-
րակոչեց , որք այժմ տան և աղաքակ-
ներու տէր եղած՝ երջանիկ կեանք մը
կը վայելէն :

Սակայն այս բոլոր բարեփոխում-
ներով հանդերձ գոհ չէին Պուլկարա-
ցիք : Իրենց երազներէն և քոյրերէն
բազմաթիւ մաս մը Թուրքերուն կոչոտ
ձեռքին տակ կը ճգմուէր , որք իրենց
բազուկներն երկնցուցած օգոստիսեան
կը կանչէին , վասնորոյ անտարբեր չէ-
ին կրնար կենալ : Նոքա կը փափաքէին
իրենց երազներն ևս ազատել գա-
ղանին ճիւղաններէն , և իրենց ճիգն ու
արիւն թափելու դաշտն էր Արեւել-
եան Րուսիա :

Լաւ կը յիշեմ , 1883 տարուան մէջ
աշխան գեղեցիկ օր մնէր : Բնութիւնն
սարուան յառաջ ընթաց արդիւնաւոր
բերքներուն վրայ ուրիշանալով , իւր
դէմքին վրայ գոյգոյն ծիծաղներ
կ'առնուր . երկրագործք ու գիւղացիք
զրադեալ էին հունձքերն շտեմարա-
ններու մէջ առնելու . ամէն տեղ աշ-
խատութեան և զուարճութեան ձայ-
ներով լի էր : Գրգռողիչ ջրվժիճներու
շառաջիւնն , գետերու մարգերու մէջ
վազելով հանած կարկաջն , աղբիւրնե-
րու մեղմ խոխոն , թռչնոց դալալ-
լիկն , դաշտերու մէջ աշխատողներու
և մանկամարդ օրիորդաց ու երիտա-
սարգաց երգերու գեղեցիկ իրարու
հետ խառնուելով սքանչելի ներդաշ-
նակութիւն մը կը գոյացնէին : Հայր-
վրթ ոչ լեռն , իւր ձիւնապատ և ամ-
պամբձ գլուխն բարձրացուցած կը
փչէր հպարտութեամբ զով գեթիւն-
ներ զաւորվայր դաշտերու ու հովիտ-
ներու վրայ : Ամենայն ինչ գեղեցիկ

ու ներդաշնակ , նոյն իսկ քաղաքական
միջնաւորարդ պոյնձաւ կերէկր : Բայց
աւա՛ղ , սա կը նմանէր լարուած զար-
թեցիչ ժամացոյցի մը որ որոշեալ ժա-
ման իւր արմկալից ճիչն կը հանէ : Ահա
այն որոշեալ պահը այս նշանաւոր օր-
ուան պահուած էր : Եանկարծ հեռա-
գիրներ հասան Սօֆիա և բոլոր Պուլ-
կարիոյ քաղաքներու ու գիւղեր տարած-
ուեցաւ պատգամն , «յեղափոխութիւնն
ի Րուսիայի , յեղափոխութիւնն , օգնե-
ցէ՛ք , ձեր եղբայրներուն» : Ահ , սոյն
պատգամն Պալեան լեռանց վրայ իւր
աշեղանոյն արծաղանքն տուաւ և յե-
տըս յղեց պատասխանն , «յեղափոխու-
թիւնն , ահա կու գանք օգնութեան» :
Հազիւ հետեւեալ օրուան արշաւոյսն
ծագած էր , Սօֆիա Մայրաքաղաքն
օգնութեան դացող զորքերով և կա-
մաւորներով լեցուած էր : Կարծես թէ
սոքա իրենց գիւղերէն օգտապարկիե-
րով կամ արաղնթաց շողեկաւորով
կը փոխադրուէին : Եւ օն , յառաջ ,
վաղեցին դէպ ի Րուսիայի :

Երբ այս օգնութեան արշաւանքն
տեղի կ'ունենար , Րուսիայի Պուլկար
տեղոյն կառավարութիւնն իրենց ձեռ-
քն առած էին , և ինտոր ընկնին ալ
շատ պարզ էր : Արդէն ամէն բան գաղտ-
նի կարգադրուած լինելով՝ մէկ խօսք
մէկ հոգի անձինքներ որոշուած էին
յանկարծ երթալ ու գրաւել կառա-
վարութեան բոլոր հաստատութեանց
բանալիներն , եթէ ոչ քաղաքութեամբ
և սիրով , այլ արտճանակի օրհնեալ
զննատկով և մատամբ նորին : Զարմա-
նալին այն է որ այս փոփոխումն ամէն
կողմանէ գրեթէ կատարեալ էր : Կա-
ռավարութեան զմիւսներն յանկարծ
փոխուած էին Պուլկարականի , նոյն
իսկ թղթատարութեան դրոշմներն կը-
րեցին իրենց վայրկեանական փոփոխու-
թիւնն . զարնելով Թուրքին մահիկ ու
աստղերին վրայ Պուլկարական ասիւժը
(այս դրոշմներէն մի քանի հատ անիւմ
քովս և փափաքողք կրնան վերջը տես-
նել) : Հարկ չէ ըսել որ շատ քիչեր ե-
ղան որ դիմադրութիւն ընէին այս
անակնկալ հրաւրան :

Այս միջոցին Պուլկարիոյ իշխանն
Աղեքսանդր Պաթէնպէրկ որ Անգլիա
իւր եղբորը հարսանեաց հանգէսին ներ-
կայ գտնուելէն կը վերադառնար , վը-
րայ հասաւ և իւր ժողովուրդին ձայ-
նին անաւով , անմիջապէս վաղեց դէպ
ի Րուսիայի՝ համոզելով զոչ եղած Սուլ-
թանն որ իբր թէ ժողովուրդը խաղա-
ղեցնելու պատրուակաւ կերթար հոն ,
և ոչ թէ զօրաց հրամանատարութիւնը
ստանցնելու : Ահա այսպէս հաղիւ ե-
րեք չորս օր անցած էր այն յեղափո-
խական լուրս բերող հեռագրին վրայ ,
Պուլկար զօրքեր , կանոնաւոր և կա-
մաւոր , գիւղեւած էին Րուսիայի և Թուր-
քիոյ սահմանազլխին վրայ՝ երկու ե-
րեք միլիոնէ բաղկացեալ իշխանու-
թիւն մը , երեսուն միլիոնէ քաղի մեծ
կայսերական կառավարութեամբ մը դէմ
պատրաստ կուռելու , պատրա տ , իւր
արդար իրաւանց համար իւր արեան
վերջին կաթիլն թափելու :

(Շարունակելի)

ԸՆԿԵՐ ՊԱՆԴԻՏԻՆ

Գրեց
Հ . ԷԿԻՆԵԱՆ

1883 է ի վեր Տ . Հ . Էկինեանի դը-
րած բանաստեղծութեանց մի հաւաքա-
ծուն է այս , որ տետր առ տետր ըս-
կած է հրատարակուիլ հեղինակի
տպարանէն : Իւրաքանչիւր տետր կը
բովանդակէ ութն երեսներ : Հատու-
նալ փափաքողք զեմելու են հեղինակի
կամ «Սուրճանդակ» իմաստաբար թեան
հասցին : Թղթատարի ծախքը ձրի է :
Գինն ամէն մի տետրին 2 սնէթ և
կանխիկ :

